| 2 | Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ինքնահավաստագրման զեկույցի մշակում: | 2.1 ՈԱՇ-ի ինքնահավաստագրման զեկույցը մշակող մասնագիտական թիմի ձևավորում:<br><br>2.2 ՈԱՇ-ի ինքնահավաստագրման զեկույցի մշակում և հրապարակում: | 2027թ. | ՀՀ ԿԳՄՍՆ | Հայաստանի ՈԱՇ-ի համապատասխանությունը Որակավորումների եվրոպական շրջանակին: | Լիարժեք մասնակցել Եվրոպական<br><br>միության (ԵՄ) կրթական նախաձեռնություններին և ինտեգրացիոն գործընթացներին: | ԵՄ-ը կարող է աջակցել զեկույցը մշակող խմբում միջազգային փորձագետ ընդգրկելու հարցում: |
| 3 | Համալսարանների հանրային պատասխանատվության, սոցիալական | 3.1 Բուհերի հանրային պատասխանատվության հայեցակարգի մշակում: | 2028 | ՀՀ ԿԳՄՍՆ, բուհեր | Բուհերի հանրային պատասխանատվության հայեցակարգի առկայությունը: | Բուհերի ներգրավվածություն Հայաստանի հանրային, տնտեսա- | ԵՄ-ը կարող է աջակցել հանրային պատասխանատության |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ուղղվածության (ներառականություն, սոցիալական արդարություն) ուժեղացում: | 3.2 Ներառականության, սոցիալական արդարության ամրապնդում: | | | Բուհերում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների թիվը:<br>Անվճար համակարգում սովորող ուսանողների թիվը: Վճարովի համակարգում սովորող, ուսման վարձի զեղչեր ստացող ուսանողների թիվը: | կան խնդիրների լուծման գործում: Բարձրագույն կրթության հասանելիություն հասարակության տարբեր խմբերի համար: | հայեցակարգի մշակման գործընթացին, բուհերի ենթակառուցվածքները հասանելու դարձնելու ծրագրին: |
| 4 | Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության տերմինաբանության հստակեցում: | 4.1Օրենսդրության մեջ ամրագրել «մեծահասակների կրթություն» հասկացությունը:<br>4.2Օրենքներում, ոլորտը կարգավորող փաստաթղթերում ներդաշնակեցնել ոչ ֆորմալ և ինֆորմալ օրենքի վերաբերող հասկացությունները: | 2026թ. | ՀՀ Ազգային ժողով, ԿԳՄՍՆ,<br>Գործընկեր կազմակերպություններ | Փաստաթղթերի քանակը, որոնցում կատարվել են փոփոխություններ:<br>Մարդկանց թիվը, որոնք վերապատրաստվել են նոր տերմինապանության կիրառման թեմաների շուրջ: | Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտի տերմինաբանական որոշակիություն: | ԵՄ-ը կարող է աջակցել մասնագետների վերապատրաստման գործում: |
| 5 | Ոչ ֆորմալ կրթության ռեեստրի գործարկում: | 5.1 Ոչ ֆորմալ կրթության ռեեստրի ստեղծում: | 2027թ. | ՀՀ ԿԳՄՍՆ, Գործընկեր կազմակերպություններ | Ռեեստրի ֆունկցիոնալությունը:<br>Ռեեստրում գրանցված ծրագրերի թիվը: | Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչում, թափանցիկության ապահովում: | ԵՍ-ը կարող է աջակցել ռեեստրի ստեղծմանը: |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾՆեր 12, 46 (ներառյալ՝ Հավելված 3) և 84 – ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

| Ň | Գործողության նկարագրությունը | Գործողություն/ներ | Վերջնաժամկետ | Կատարող/ներ | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունք | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիքների ամրապնդում | Մշակել և ընդունել զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով քննության համար միասնական մեթոդաբանություն՝ ապահովելով հստակ ընթացակարգեր և հաշվետվողականություն | 2025թ. երկրորդ կիսամյակ | Արդարադատության նախարարություն, Գլխավոր դատախազություն | Նվազել է ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերով հարուցված գործերով չբացահայտված դեպքերի թիվը: Նվազել են քրեական վարույթներով կայացվող վերջնական վարույթային ակտերի բողոքարկման դեպքերը | Զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան չբացահայտված դեպքերը նվազել են, բարձրացել է քննության նկատմամբ վստահությունը | Քրեական գործերի քննության գործնական ուղեցույցի մշակման ֆինանսավորում |
| 2 | Քրեակատարողական ոլորտում մարդու իրավունքների երաշխիքների ամրապնդում | Սեղմ ժամկետում կառուցել նոր քրեակատարողական հիմնարկ, փակելով «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը: | 2027թ. երկրորդ կիսամյակ | Արդարադատության նախարարություն | «Նուբարաշեն» ՔԿՀ-ն փակված է, դրան փոխարինող նոր քրեակատարողական հիմնարկը կառուցվել է: | «Նուբարաշեն» ՔԿՀ-ն փակված է, դրան փոխարինող նոր քրեակատարողական հիմնարկը կառուցվել է: | ԵՄ համաֆինանսավորում՝ նոր հիմնարկի կառուցման համար |
| 3 | Քրեակատարողական ոլորտում մարդու իրավունքների երաշխիքների ամրապնդում | Վերանորոգել ՀՀ բոլոր քրեակատարողական հիմնարկների վերանորոգման կարիք ունեցող խցերը և կացարանները, ինչպես նաև նորոգել և պատշաճ կահավորել երկարատև տեսակցությունների սենյակները | 2026թ. երկրորդ կիսամյակ | Արդարադատության նախարարություն | Նորոգվել են բոլոր նորոգման կարիք ունեցող խցերը, երկարատև տեսակցությունների սենյակները կահավորվել և նորոգվել են | Խցերը, կացարաններն ու տեսակցության սենյակները գտնվում են պատշաճ վիճակում, ապահովված են մարդկային արժանապատվության համար անհրաժեշտ պայմաններով, ներառյալ երեխաներին տեսակցելու համար անհրաժեշտ կահավորանքով | ԵՄ ֆինանսական աջակցություն՝ վերանորոգման և կահավորման աշխատանքների համար |
| 4 | Իրավապաշտպան քաղաքացիական հասարակության | «Actio popularis» ինստիտուտի ամրապնդում՝ հասարակական միավորումների դատա- | 2025թ. երկրորդ կիսամյակ | Արդարադատության նախարարություն | Ընդունվել են օրենսդրական փոփոխություններ, որոնք ապահովում են հասարակական միավո- | Հասարակական միավորումները ձեռք են բերել պատշաճ դատա- | Օրենսդրական փաթեթների մշակման փուլում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | դերի ամրապնդում | վարական իրավասուբյեկտության ընդլայնում՝ վարչական և քրեական դատավարության օրենսգրքերում համապատասխան փոփոխությունների միջոցով | | | րումների դատավարական իրավասուբյեկտությունը տարբեր կարևորագույն ոլորտներում | վարական իրավասուբյեկտություն՝ հասարակության համար կարևոր ոլորտներում, ներառյալ նորմատիվ ակտերի վիճարկում, մշակութային արժեքների պահպանում, ընտրական իրավունքների պաշտպանություն, քաղաքաշինական ծրագրեր, ինչպես նաև տուժողների շահերի պաշտպանություն քրեական վարույթներում | փորձագիտական աջակցություն |
| 5 | Դատական ակտերի հարկադիր կատարման ապահովում | Երրորդ անձանց անվամբ գրանցված՝ պարտապանին պատկանող գույքի բռնագանձման մեխանիզմների, ինչպես նաև դատական ակտերի կատարման ուշացման համար հարկադիր կատարման ծառայության պատասխանատվության մեխանիզմների ներդրում | 2026թ. առաջին կիսամյակ | Արդարադատության նախարարություն | Ներդրվել են գույքի բռնագանձման և պատասխանատվության օրենսդրական մեխանիզմներ, բարձրացել է դատական ակտերի կատարման ցուցանիշը, նվազել են բողոքների քանակը | Նվազել է չկատարված կամ ոչ պատշաճ կատարված դատական ակտերի թիվը | Օրենսդրական փաթեթների մշակման փուլում փորձագիտական աջակցություն, մասնավորապես՝ միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 4-րդ հոդված (c), 12-րդ հոդված (1) – ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

| Ñ | Գործողության նկարագրությունը | Գործողություն/ներ | Վերջնաժամկետ | Կատարող/ներ | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունքը | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ առաջին ատյանի դատարաններում չի իրականացվում վիճակագրական տվյալների հավաքագրում ավարտված և ընթացիկ գործերի քննության միջին տևողության վերաբերյալ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ դատական օրենսգիրքը (19-րդ հոդվածի 7-րդ մասի 6-7 ենթակետերը) նման պահանջ սահմանում է ավարտված գործերի համար: Առաջարկվում է հաշվարկել ինչպես ավարտված, այնպես էլ ընթացիկ գործերի քննության տևողությունը, ինչը հնարավորություն կտա գնահատել դատարանի և դա- | Մշակել և ներդնել ՀՀ առաջին ատյանի դատարաններում դատական գործերի քննության միջին տևողությունը հաշվարկող համակարգ՝ ըստ ժամանակի և կայացած նիստերի: | 2027 թ. առաջին կիսամյակ | ՀՀ ԲԴԽ<br>ՀՀ դատական դեպարտամենտ | ՀՀ առաջին ատյանի դատարաններում դատական գործերի քննության միջին տևողության հաշվարկման համակարգը ներդրված է և գործում է՝ ապահովելով տվյալների պարբերական վերլուծություն: | ՀՀ առաջին ատյանի դատարաններում ներդրված և գործարկվող դատական գործերի քննության միջին տևողության հաշվարկման համակարգի միջոցով պարբերաբար հաշվարկվում և գնահատվում է գործերի քննության տևողությունը, ինչն ապահովում է դատական գործերի քննության թափանցիկությունն ու արդյունավետության բարձրացումը: | Փորձագիտական և ֆինանսական աջակցություն համակարգի մշակման համար: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տավորների ծանրաբեռնվածության մակարդակը և աշխատանքի արդյունավետությունը: | | | | | | |
| 2 | ՀՀ դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրությունը ներկայումս լիարժեք հնարավորություն չի տալիս գնահատելու դատարանների աշխատանքի արդյունավետությունը: Կազմվող հաշվետվություններում չեն իրականացվում տվյալների համադրված վերլուծություն և խորքային գնահատում, իսկ մի շարք էական ցուցանիշներ՝ մասնավորապես գործերի քննության միջին տևողությունը, առհասարակ բացակայում են:<br><br>Դատարանների աշխատանքի արդյունավետության | **Մշակել դատարանի աշխատանքի արդյունավետության ցուցիչները (efficiency court indicators):**<br><br>Դատարանի աշխատանքի արդյունավետության ցուցիչների հիման վրա ապահովել տարեկան հաշվետվությունների կազմումը և հրապարակումը՝ ըստ դատարանների: | 2026 թ. երկրորդ կիսամյակ<br><br>2027 թ. երկրորդ կիսամյակ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ԲԴԽ<br>ՀՀ դատական դեպարտամենտ | Դատարանի աշխատանքի արդյունավետության ցուցիչները մշակված և հաստատված են ՀՀ ԲԴԽ որոշմամբ:<br><br>Ստեղծված է տվյալների հավաքագրման ծրագիր:<br><br>ՀՀ առաջին ատյանի դատարաններում կիրառվում են դատարանի աշխատանքի արդյունավետության ցուցիչները:<br><br>Հրապարակված հաշվետվություններ (13)՝ ըստ դատարանների | Մշակված և ներդրված դատարանի աշխատանքի արդյունավետության ցուցիչների (efficiency court indicators) համակարգի հիման վրա կատարվում է տվյալների պարբերական հավաքագրում, վերլուծություն և յուրաքանչյուր դատարանի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմում և հրապարակում, ինչը ապահովում է դատական համակարգի աշխատանքի թափանցիկություն, հաշվետվողականություն և արդյունավետության բարձրացում: | Փորձագիտական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գնահատումը, ինչպես նաև դատական համակարգի թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը պահանջում են նոր համակարգային մոտեցում: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել դատարանների կատարողականի արդյունավետության գնահատման ցուցիչների համակարգ (efficiency court indicators), որը կներառի, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական տվյալները՝ գործերի քննության միջին տևողություն, դատավորների ծանրաբեռնվածություն, դատական նիստերի քանակ, ավարտված և չավարտված գործերի տոկոսային հարաբերակցություն:<br><br>Ցուցիչների հիման վրա կկազմվեն և | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տարեկան պարբե-րականությամբ կիրապարակվեն դատարանների գործունեության հաշվետվություն-ներ՝ հնարավորու-թյուն ընձեռելով իրականացնել ար-դարադատության ոլորտի շարունա-կական մշտադի-տարկում և բացա-հայտել բարելավ-ման հնարավոր ուղղությունները: | | | | | | |
| 3 | Դատավորների թվի օպտիմալ ո-րոշման համար մի-ջազգային փորձում լայնորեն կիրառ-վում է **Case Weighting System (CWS)**՝ գործերի կշռման մեթոդա-բանությունը, որը նախատեսված է դատական ծանրա-բեռնվածության բազմակողմանի և ճշգրիտ գնահատ-ման համար՝ հաշվի առնելով ոչ միայն գործերի քանակը, | Մշակել ՀՀ առաջին ատյանի դատարաններում գործերի կշռման մեթոդաբանությունը (Case Weighting) :<br><br>Արդիականացնել գործերի բաշխման համակարգը՝ հիմք ընդունելով գործերի կշռման (Case Weighting) մեթոդաբա-նությունը:<br><br>Վերապատրաստել դատա-վորներին և աշխատակազ-մին մշակված մեթոդաբա-նության կիրառման համար: | 2027թ.երկ-րորդ կիսամ-յակ | ՀՀ արդարադատութ-յան նախարարություն ՀՀ ԲԴԽ | Case Weighting մեթոդաբանության մշակված և հաստատված է ՀՀ ԲԴԽ կողմից մինչև 2026 թ. երկրորդ կի-սամյակ:<br><br>Case Weighting մեթոդաբանության ներդրված է ՀՀ առաջին ատյանի բոլոր դատարաններում մինչև 2027 թ. առաջին կիսամյակ:<br><br>Գործերի բաշխման համակարգը արդիականացված է՝ հիմնվելով նոր Case Weighting մեթոդաբա-նության վրա մինչև 2027 թ. երկ-րորդ կիսամյակ:<br><br>ՀՀ առաջին ատյանի դատարանի դատավորները և աշխատակազմը վերապատրաստված են մինչև 2027 թ. առաջին կիսամյակը: | ՀՀ առաջին ատյանի դատարաններում գոր-ծերի կշռման (Case Weighting) մեթոդաբա-նության կիրառմամբ ապահովվում է գործե-րի արդար և համաչափ բաշխում՝ հաշվի առ-նելով դրանց բարդութ-յունն ու ծավալը, ինչը նպաստում է դատա-վորների ծանրաբեռն-վածության հավասա-րակշռմանը և դատա-րանների աշխատան-քի արդյունավետութ-յան բարձրացմանը: | Փորձագիտա-կան աջակցութ-յուն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | այլև դրանց բարդության աստիճանը:<br><br>Գործերի կշռման մեթոդաբանությունն ապահովում է գործերի իրական բարդության գնահատումը՝ հաշվի առնելով ոչ միայն իրավական, այլև փաստական հանգամանքները:<br><br>Այս մեթոդաբանության ներդրումը ՀՀ դատական համակարգում հնարավորություն կտա հաշվարկել մեկ տարվա ընթացքում գործերի քննության համար պահանջվող աշխատանքային ժամերի ամբողջական ծավալը՝ ապահովելով դատավորների թվի օպտիմալ հաշվարկ և ծանրաբեռնվածության արդար գնահատում: | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Միևնույն ժամանակ, համակարգը պետք է հաշվի առնի նաև այն աշխատանքային ժամերը, որոնք ծախսվում են գործերին անմիջապես չառնչվող, սակայն դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածության բաղադրիչ հանդիսացող գործառույթների վրա: Դրանք ներառում են մասնագիտական կոնֆերանսներին մասնակցությունը, աշխատանքային հանդիպումները, դատավորի աշխատակազմի ղեկավարումն ու համակարգումը, ինչպես նաև դատական համակարգի կազմակերպչական գործառույթներում ներգրավվածությունը: | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 2023 թ.-ի տվյալների համաձայն՝ Հայաստանում 100,000 բնակչի հաշվով գործում է 10.5 դատավոր, ինչը մոտ է Արևելյան գործընկերության երկրների միջին ցուցանիշին (10.2), սակայն մնում է ցածր Եվրոպայի երկրների համեմատական միջինից: Նշված տվյալները վկայում են, որ 2018 թվականից մինչև 2023 թվականը դատավորների թվաքանակը Հայաստանում աճել է շուրջ 32.5%-ով: Չնայած այն հանգամանքին, որ նշված ցուցանիշները վկայում են Հայաստանում դատավորների թվի աճի դրական միտման մասին, այդ աճը դեռևս չի կարելի համարել բավարար՝ արդարադատության արդյունավետության և | Ավելացնել առաջին ատյանի դատավորների և դատավորների աշխատակազմի թվակազմը 20%: | 2028 թ.-ի երկրորդ կիսամյակ: | ՀՀ Դատական դեպարտամենտՀՀ ԲԴԽ, ՀՀ Արդարադատության նախարարություն | ՀՀ առաջին ատյանի դատարանների դատավորների և նրանց աշխատակազմի թվակազմը ավելացվել է 20%-ով: | ՀՀ առաջին ատյանի դատարաններում ապահովվել է դատավորների և դատական աշխատակազմի հաստիքների առնվազն 20%, դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման, գործերի քննության ժամկետների կրճատման և արդարադատության մատչելիության բարձրացմանը: | Ֆինանսական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մատչելիության ապահովման տեսանկյունից: Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (ԱԱԵՀ) արձանագրել է, որ Հայաստանը դասվել է այն ութ անդամ պետությունների շարքում, որոնց դեպքում արձանագրվել է գործերի քննության ուշացում և չավարտված գործերի կուտակում (creating backlog): Մեկ դատավորի հաշվով քննվող քր.գործերի միջին թիվը 2024 թ.-ին կազմել է մոտ **181** գործ, քաղ. գործերով՝ 956, վարչ. գործերով՝ 1316, սնանկության գործերով՝ 1,097:<br><br>**2019 թ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ** | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ամրագրված էր, որ** դատավորների աշխատակազմի թվակազմի ավելացումը՝ այդ թվում բացի օգնականներից և գործավարներից ընդգրկելով նաև բարձր որակավորում ունեցող փորձագետների, կբարձրացնի դատական ակտերի որակը և կամրապնդի դրանցում մարդու իրավունքների միջազգային չափանիշների կիրառման պրակտիկան: Սակայն նշված գործողությունը չի կատարվել: | | | | | | |
| 5 | Գործողության նպատակն է բարելավել ընտանեկան և աշխատանքային իրավունքի գործերի քննության արդյունավետությունը՝ ապահովելով ՀՀ առաջին ատյանի դատարանների դատավորների մասնագիտացում նշված ոլորտնե- | Ապահովել ՀՀ առաջին ատյանի դատարանների դատավորների մասնագիտացումը ընտանեկան և աշխատանքային գործերով՝ կազմակերպելով նպատակային վերապատրաստումներ և գործերի բաշխում՝ ըստ դատավորի մասնագիտացման: | 2026 թ. երկրորդ կիսամյակ | ՀՀ ԲԴԽ<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության ակադեմիա | **Առնվազն 17 դատավոր մասնագիտացված է ընտանեկան իրավահարաբերություններից բխող գործերի քննության ոլորտում:**<br><br>**Առնվազն 3 դատավոր մասնագիտացված է աշխատանքային իրավահարաբերություններից բխող գործերի քննության ոլորտում:** | ՀՀ առաջին ատյանի դատարաններում գործերի քննությունն ընտանեկան և աշխատանքային իրավունքի ոլորտներում իրականացնում են մասնագիտացված դատավորներ, ինչի շնորհիվ բարձրանում է դատական ակտերի որակը, կրճատվում է քննության տևողությունը և | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | րում: Դրա շրջանակում նախատեսվում է իրականացնել թիրախային վերապատրաստումներ և կիրառել գործերի բաշխման մեխանիզմ, որը հաշվի է առնում դատավորի մասնագիտացումը:- Մասնագիտացման գործընթացը կխթանի դատական ակտերի որակի բարձրացմանը, գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը: Ուսումնասիրության շրջանակում իրականացվել է մշտադիտարկում՝ 2022–2024 թթ. ընթացքում Դատալեքս համակարգում հրապարակված ընտանեկան իրավահարաբերություններից բխող 42 գործերի քննության ժամկետների վերաբերյալ՝ նպատակ ունենալով | | | | Գործերի բաշխման համակարգը վերանայված է և ընտանեկան և աշխատանքային իրավահարաբերություններից բխող գործերը հանձնվում են համապատասխան ոլորտում մասնագիտացված դատավորներին: | բարելավվում է արդարադատության մատչելիությունն այս ոլորտներում: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գնահատել դատավարական ժամկետների պահպանման արդյունավետությունը և գործերի քննության ընդհանուր տևողությունը:<br><br>Ուսումնասիրության շրջանակներում իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ ընտանեկան իրավահարաբերություններից բխող գործերի քննության տևողությունը էականորեն տատանվում է՝ սկսած **3 ամսից մինչև 21 ամիս**:<br><br>Մասնավորապես, դիտարկված գործերի շրջանակում արձանագրվել են ինչպես համեմատաբար կարճ ժամկետում՝ 3-4 ամսում, քննված գործեր, այնպես էլ գործեր, որոնց | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | քննությունը գերազանցել է մեկուկես տարվա տևողությունը: Աշխատանքային վեճերի դեպքում ինչպես դատավորների դիտարկումները, այնպես էլ կատարված մշտադիտարկումները վկայում են, որ օրենքով սահմանված երեքամսյա ժամկետը գործերի քննության համար շատ դեպքերում չի պահպանվում: Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերը կազմում են ՀՀ առաջին ատյանի դատարանների քաղաքացիական գործերի ընդհանուր թվի 5.5 %-ը, իսկ աշխատանքային իրավահարաբերությունների՝ 1.05 %: Հաշվի առնելով գործերի քանակն ու դատավորների ծանրաբեռն- | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վածության ցուցանիշները՝ նպատակահարմար է ապահովել առնվազն 14 մասնագիտացված դատավոր ընտանեկան իրավունքի գործերի, և առնվազն 3 դատավոր՝ աշխատանքային իրավահարաբերություններից բխող գործերի քննության համար: | | | | | | |

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾ 44 – ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

| Ň | Գործողության նկարագրությունը | Գործողություն/ներ | Վերջնաժամկետ | Կատարող/ներ | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունք | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Իրավունքահեն քաղաքականության շրջանակի ընդունում և իրականացում, այդ թվում աջակցման միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրում և հարկադրական | 1. Հոգեկան առողջության պահպանման և բարելավման ռազմավարության ընդունում | 2026 երկրորդ կիսամյակ | ՀՀ կառավարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | Հոգեկան առողջության պահպանման և բարելավման ռազմավարությունը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | բուժման միջոցների վերացում ՄԱԿ չափանիշներին համապատասխան | | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (համաձայնությամբ)<br><br>ՀԿ-ներ (համաձայնությամբ)<br><br>Հոգեկան առողջության ոլորտի մասնագետներ (համաձայնությամբ) | Մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականության երեք փաստաթղթի առկայություն | | |
| | | 2. Աջակցման միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագրի հաստատում | 2026 առաջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | Անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցման միջոցով որոշումների կայացման մեխանի- | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | զմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ | |
| | | 3. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի բացառման քաղաքականության մշակում | 2027 թ. առաջին եռամսյակ | ՀՀ կառավարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ<br><br>Լրագրողական, հեռուստատեսային և ռադիո համայնք | | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի բացառման քաղաքականության փաստաթուղթը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (համաձայնությամբ)<br><br>ՀԿ-ներ (համաձայնությամբ)<br><br>Հոգեկան առողջության ոլորտի մասնագետներ (համաձայնությամբ) | | | |
| | Բնակչության համար հոգեկան առողջության ծառայությունների հասանելիության ապահովում | Հոգեկան առողջությանիրավունքահեն ծառայությունների ներդրում և զարգացում | շարունակական | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ<br><br>ՀԿ-ներ (համաձայնությամբ) | Հոգեկան առողջության ծառայությունների իրավունքահեն ծառայությունների մատուցման տևողություն՝ նվազագույնը 36 ամիս | ՀՀ Արարատի և Շիրակի մարզերում պիլոտ անցած մոբիլ ծառայությունը պատվիրակված է<br><br>ՀՀ այլ մարզերում ևս ներդրված է նվազագույնը երկու մոբիլ ծառայություն<br><br>ՀՀ Արարատի և Շիրակի մարզերում պիլոտ անցած փոխօգնության խմբերի ծառայությունը պատվիրակված է<br><br>ՀՀ այլ մարզերում ևս ստեղծված է նվազագույնը երկու փոխօգնության երկու խումբ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Իրականացված է ճգնաժամային ծառայության պիլոտ և գործում է ՀՀ նվազագույնը երկու մարզում<br><br>Հիմնված է հոգեբուժական բաժանմունք նվազագույնը երկու բազմապրոֆիլ հիվանդանոցում | |

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾ 95 «a», «c» ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

| Ν | Գործողության նկարագրությունը | Գործողություն/ներ | Վերջնաժամկետ | Կատարող/ներ | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունք | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **ՀԸԳՀ Հոդված 95** ա) (a) Հայաստանի և ԵՄ-ի երիտասարդական քաղաքականություններ մշակողների և երիտասարդական աշխատողների համար փոխանակումների ու վերապատրաստման ծրագրերի իրականացում: | 1. ԵՒ-ի պորտֆոլիոյի բոլոր թեմաներին առնչվող կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնություններ և գիտելիքների զարգացում՝ հստակ ուսումնական պլանի մշակմամբ:<br>2. Երիտասարդական աշխատանքում պահանջված հմտությունների քարտեզագրում՝ ելնելով երկրի կոնկրետ կարիքներից, իրականացնել հետազոտություններ և սահմանել փորձի փոխանակման և ուսումնական | 2028թ. | ՀՀ կառավարություն ԿԳՄՍՆ | 1. **Մշակված ուսումնական պլանների քանակը**, որոնք ընդգրկում են ԵՒ պորտֆոլիոյի թեմատիկ ուղղությունները<br><br>☐ **Ուսուցմանն մասնակցած մասնակիցների քանակը** տարիքային, սեռային և աշխարհագրական կտրվածքով:<br><br>☐ **Մեկ տարվա ընթացքում իրականացված կարողութ-** | 1. ԿԳՄՍՆ կողմից հիմնադրված բոլոր երիտասարդական կենտրոններից առնվազն մեկ երիտասարդական աշխատողի մասնակցությունը կարողությունների զարգացման և փորձի փոխանակման ծրագրերին համապատասխան ԵՒ պորտֆոլիոյի: | Փորձագիտական աջակցություն Նախարարության հետ համատեղ ծրագրերի իրականացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | այցերի թեմաների ու թեմատիկ ոլորտների հստակ շրջանակ:<br>3. Երիտասարդական պետական քաղաքականության մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդնում մասնակցային մեթոդաբանությամբ: | | | **յունների զարգացման ծրագրերի քանակը**՝ ըստ թեմատիկ ուղղությունների:<br><br>☐ **Մասնակիցների գնահատմամբ ծրագրի արդյունավետության միջին գնահատականը** (օրինակ՝ 5 միավորային սանդղակով՝ առնվազն 4):<br><br>☐ **Մշակված ուսումնական նյութերի և ձեռնարկների քանակը**, որոնք հարմարեցված են երիտասարդական աշխատողներին և երիտասարդական կենտրոններին:<br><br>2. **Իրականացված կարիքների գնահատման և հմտությունների քարտեզագրման հետազոտությունների քանակը**, որոնք ներառում են երիտասարդական աշխատանքի ոլորտը:<br><br>☐ **Հրապարակված զեկույցների քանակը**, որոնցում ներկայացված են երիտասարդական աշխատանքի պահանջվող հմտությունները:<br><br>☐ **Մշակված ուսումնական այցերի թեմատիկ առաջնահերթությունների քանակը**, | 2. ԿԳՄՍՆ կողմից հիմնադրված բոլոր երիտասարդական կենտրոնների երիտասարդական աշխատողները վերապատրաստված են բոլոր պահանջված ուղղություններով:<br><br>3.1.Երիտասարդական պետական քաղաքականության մշտադիտարկման և գնահատման ներդրված համակարգ<br>3. 2.Երիտասարդական կենտրոնների ազգային հավատարմագրման մշակված որակի ստանդարտներ<br>3.3.Բոլոր երիտասարդական կենտրոններում մասնակցային և երիտասարդների համար մատչելի մշտադիտարկման և գնահատման համակարգ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հիմնված տվյալների վերլուծության վրա:<br><br>☐ **Իրականացված փորձի փոխանակման ծրագրերի քանակը** (ներքին և միջազգային):<br><br>☐ **Ծրագրերից հետո մասնակիցների կողմից հաղորդված հմտությունների զարգացման միջին մակարդակը**, ըստ նախնական և վերջնական գնահատումների:<br><br>3. ☐ **Մշակված և հաստատված մշտադիտարկման և գնահատման փաստաթուղթ**, որը ներառում է տվյալների հավաքագրման մեթոդները, ընտրանքային հանախմբությունը, ժամկետները, բյուջե, տվյալների վերլուծության և տարածման մեխանիզմները, էթիկական չափանիշները:<br><br>☐ **Մասնակցային գործընթացներում ներգրավված շահառուների քանակը**՝ այդ թվում՝ երիտասարդներ, ՀԿ-ներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, փորձագետներ:<br><br>☐ **Տարվա ընթացքում իրականացված քաղաքականությ-** | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **յան գնահատման զեկույցնե-րի քանակը**, որոնք ներառում են երիտասարդների կարծիքները:<br><br>☐ **Պետական մակարդակով ընդունված բարեփոխման առաջարկությունների քա-նակը**, որոնք հիմնված են գնա-հատման արդյունքների վրա:<br><br>☐**Քաղաքականության գնա-հատման արդյունքում արձա-նագրված դրական փոփո-խությունների քանակը կամ տոկոսը**, օրինակ՝ բարելավված հասանելիություն, թիրախավոր-ված ծրագրերի ավելացում: | | |
| 2 | **ՀԸԳՀ Հոդված 95** գ) (c) ԵՄ անդամ պետությունների երիտասարդական կենտրոններում փորձնակության կազմակերպում այն երիտասարդ-ների համար, ո-րոնք Հայաստա-նում մասնակցել և հաջողությամբ ա-վարտել են երի-տասարդական աշ-խատողի վերա-պատրաստման դասընթացը: | 1.Հայաստանում վերապատ-րաստված երիտասարդական աշխատողների կարողութ-յունների գնահատում:<br>2.Հայաստանում վերապատ-րաստված երիտասարդական աշխատողների կարողութ-յունների զարգացման պլա-նի մշակում:<br>3.Հայաստանում վերապատ-րաստված երիտասարդական աշխատողների փորձի փո-խանակման մասնակցութ-յան ապահովում: | 2028թ. | ՀՀ կառավարություն ԿԳՄՍՆ | 1. ☐ **Իրականացված կարո-ղությունների գնահատման հետազոտությունների քա-նակը**՝ խառը մեթոդաբանութ-յամբ (հարցում, հարցազրույց, խմբային քննարկումներ, գիտելի-քի գնահատման առաջադրանք-ներ):<br><br>☐ **Գնահատմանը մասնակ-ցած երիտասարդական աշ-խատողների քանակը**, ըստ մարզերի և կազմակերպություն-ների:<br><br>☐ **Հիմնարար կարողություն-ների տիրապետման միջին** | 1. Հայաստանում վե-րապատրաստված երիտասարդական աշ-խատողները տիրապե-տում են անհրաժեշտ կարողություններին:<br>2. Հայաստանում վե-րապատրաստված երիտասարդական աշ-խատողների կարո-ղությունների զար-գացման մշակված պլան:<br>3. Հայաստանում վե-րապատրաստված առնվազն 3 երիտա-սարդական աշխա-տողներ մասնակցել են | ԵՄ-ի կողմից փորձի փոխա-նակման այցե-րի ֆինանսա-վորում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **գնահատականը**՝ ըստ ոլորտնե-րի (օր. ծրագրերի կառավարում, ներգրավվածություն, առաջնոր-դություն, երիտասարդների կա-րիքներ և այլն):<br><br>☐ **Գնահատման պարբերա-կանության պահպանում**՝ առնվազն տարեկան մեկ անգամ իրականացված գնահատում:<br><br>☐ **Կարողությունների պակա-սի վերաբերյալ հրապարակ-ված վերլուծական զեկույց-ների քանակը**, որոնք ուղղոր-դում են կարողությունների զար-գացման ծրագրերը:<br><br>2. ☐ **Մշակված կարողություն-ների զարգացման պլանների քանակը**, հիմնված կարիքների գնահատման արդյունքների վրա:<br><br>☐ **Պլանում ընդգրկված հմտությունների քանակը**, որոնք համապատասխանեցված են ԵԽ պորտֆոլիոյին և ազգային ռազմավարական փաստաթղթե-րին:<br><br>☐ **Իրականացված վերա-պատրաստման գործողութ-յունների քանակը պլանի** | փորձի փոխանակմա-նը տարեկան: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **շրջանակում**՝ ըստ տարիների, թեմաների, մարզերի:<br><br>☐ **Պլանի միջոցով վերապատրաստված մասնակիցների տոկոսը**, որոնք նախապես գնահատված են որպես ցածր կարողություններ ունեցող:<br><br>☐ **Երիտասարդական կազմակերպությունների և շահառուների մասնակցության մակարդակը պլանի մշակման գործընթացում** (օրինակ՝ ներգրավված երիտասարդների, ՀԿ-ների կամ փորձագետների թիվ):<br><br>3.☐ **Իրականացված փորձի փոխանակման ծրագրերի քանակը**:<br><br>☐ **Փորձի փոխանակման ծրագրերին մասնակցած աշխատողների քանակը**, ըստ սեռի, տարիքային խմբերի և մարզերի:<br><br>☐ **Մասնակիցների կողմից հաղորդված մասնագիտական աճի կամ նոր հմտութ-** | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **յունների ձեռքբերման մակարդակը**՝ ելնելով հետադարձ կապի և գնահատման ձևերից:<br><br>☐ **Գործընկեր կազմակերպությունների քանակը**, որոնք ներգրավված են փորձի փոխանակման ծրագրերում:<br><br>☐ **Փորձի փոխանակման արդյունքում ստեղծված մեթոդաբանական, ուսումնական նյութերի, հաջողության պատմությունների քանակը:** | | |

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾ 85 – ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

| Ň | Գործողության նկարագրությունը | Գործողություն(ներ) | Վերջնաժամկետ | Կատարող(ներ) | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունք | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախաձեռնություն՝ տեսչական մարմինների, այդ թվում՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ղեկավարի և տեղակալների պաշտոններին ներկայացվող պահանջները համապատասխանեցնելով ՄԱԳԹ թիվ 81 Կոնվենցիայի 6-րդ հոդվածին: | Իրավական վերլուծություն՝ գործող կարգավորումների և Կոնվենցիայի դրույթների միջև համապատասխանության գնահատման համար:<br><br>Օրենքի փոփոխությունների նախագծի մշակում:<br><br>Համապատասխան շահակիցների (ԱԺ, ԱՄՀՆ, տեսչական մարմիններ, քաղաքացիական հասարակություն) հետ խորհրդակցություններ:<br><br>Օրենսդրական փոփոխությունների ներկայացում և առաջմղում ԱԺ-ում: | 2025 թվականի դեկտեմբեր | Արդարադատության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱԱՏՄ, ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողով | Մշակված և շրջանառության մեջ դրված օրենսդրական նախագիծ:<br><br>Կոնսենսուսի հասնելու համար իրականացված առնվազն 3 շահակիցների խորհրդակցություն:<br><br>Օրենսդրական փոփոխությունների ընդունում Ազգային ժողովի կողմից: | Տեսչական մարմինների ղեկավարության պաշտոններում կայունություն և անկախություն՝ անկախ քաղաքական իշխանության փոփոխությունից: Հավատարիմ համապատասխանություն թիվ 81 Կոնվենցիային՝ հատկապես 6-րդ հոդվածի պահանջներին | Իրավաբանական փորձագիտական աջակցություն Կոնվենցիայի պահանջների նկատմամբ ազգային իրավակարգավորման համապատասխանության գնահատման համար:<br><br>ԵՄ տեխնիկական աջակցություն՝ օրենսդրական բարեփոխման մշակման և շահակիցների ներգրավման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:<br><br>Քաղաքացիական հասարա- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կության ներգրավման խթանում՝ հանրային քննարկումների կազմակերպման և փորձագիտական կարծիքի ձևավորման միջոցով: |
| 2 | «Աշխատանքային տեսչական մարմինների մասին» օրենսդրությամբ հստակ սահմանել աշխատանքային տեսուչների լիազորությունները՝ ՄԱԳԹ թիվ 81 Կոնվենցիայի պահանջներին համապատասխան: | Գործող օրենսդրության (այդ թվում՝ «Աշխատանքի տեսչության մասին» օրենքի, Աշխատանքային օրենսգրքի և ենթաօրենսդրական ակտերի) վերլուծություն:<br><br>Կոնվենցիայի դրույթների համադրում՝ լիազորությունների շրջանակի որոշման համար:<br><br>Օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում:<br><br>Քննարկումներ շահակիցների հետ՝ գործատուների միություն, արհմիություններ, ՔՀԿ-ներ:<br><br>Օրենսդրական փոփոխությունների ներկայացում ԱԺ: | 2026 թվականի մարտ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱԱՏՄ, Արդարադատության նախարարություն, ԱԺ համապատասխան հանձնաժողովներ, ՔՀԿ-ների ներկայացուցիչներ | Աշխատանքային տեսուչների լիազորությունների վերաբերյալ մշակված օրենսդրական փաթեթ:<br><br>Իրավական ակտերում ներգրավված Կոնվենցիայի պահանջների արտացոլում:<br><br>Գործատուների և աշխատողների ներկայացուցիչների հետ առնվազն 3 հանրային քննարկում:<br><br>Նախագծի ընդունում Ազգային ժողովի կողմից: | Աշխատանքային տեսուչների լիազորությունների հստակեցում և ընդլայնում՝ ապահովելով արդյունավետ և անաչառ տեսչական վերահսկողություն, ինչպես նաև թափանցիկություն և Կոնվենցիայի պահանջներին համապատասխանություն: | Իրավաքաղաքական փորձագիտական աջակցություն՝ Կոնվենցիայի դրույթների իրավական ինտեգրման գործընթացում:<br><br>Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն:<br><br>Տեխնիկական աջակցություն շահակիցների համաժողովների կազմակերպման և փոփոխություննե- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | րի հանրայնացման գործում:<br><br>Կառուցողական երկխոսության ապահովում սոցիալական գործընկերների միջև ԵՄ միջնորդությամբ: |
| 3 | Օրենսդրական կարգավորումներով նախատեսել անանուն բողոքների ներկայացման և դրանց արձագանքման մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել այդ համակարգի արդյունավետ գործարկման իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը: | Գործող օրենսդրության վերլուծություն՝ բողոքարկման և վերահսկողական մեխանիզմների առկայության և արդյունավետության գնահատման նպատակով:<br><br>Անանուն բողոքների ընդունման և արձագանքման միջազգային փորձի ուսումնասիրություն:<br><br>Օրենսդրական առաջարկությունների մշակում՝ մեխանիզմների ներդրման և իրավական երաշխիքների սահմանման համար:<br><br>Տեխնիկական լուծումների մշակում՝ էլեկտրոնային հարթակի կամ թեժ գծի միջոցով անանուն հաղորդումների ընդունման համար: | 2026 թվականի սեպտեմբեր | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱԱՏՄ, Արդարադատության նախարարություն, ՏՀՏ ոլորտի փորձագետներ, ՔՀԿ-ներ | Մշակված և ընդունված օրենսդրական փաթեթ՝ անանուն բողոքների վերաբերյալ:<br><br>Գործարկվող տեխնիկական հարթակ կամ թեժ գիծ՝ անանուն բողոքների ընդունման նպատակով:<br><br>Առնվազն 20 անանուն հաղորդում՝ համակարգի գործարկումից առաջին վեց ամսում:<br><br>Իրազեկման միջոցառումների իրականացում՝ շահակիցների շրջանում: | Անանուն բողոքների ներկայացման և արձագանքման գործուն համակարգի ներդրում, որը կնպաստի աշխատողների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը և տեսչական մարմինների գործունեության թափանցիկության ամրապնդմանը | Տեխնիկական աջակցություն՝ համապատասխան էլեկտրոնային հարթակի մշակման և ներդրման գործում:<br><br>Իրավաբանական խորհրդատվություն՝ անանուն հաղորդումների վերաբերյալ մարդու իրավունքների պահովման համատեքստում:<br><br>ԵՄ ֆինանսական աջակցություն՝ համակարգի զար- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրային իրազեկման արշավների իրականացում՝ համակարգի նկատմամբ վստահություն ձևավորելու նպատակով: | | | | | գացման, անձնակազմի վերապատրաստման և իրազեկման արշավների իրականացման նպատակով:<br><br>Միջազգային փորձի փոխանցում՝ փորձագիտական այցերի կամ խորհրդատվական առաքելությունների միջոցով: |
| 4 | Տեսչական մարմնի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է տվյալների թվայնացման գործընթացի խորացում, էլեկտրոնային գործիքների ներդրում և տեխնիկական կարողությունների՝ մասնավորապես համակարգչային սարքավորումների և կապի միջոցների արդիականացում: | Գոյություն ունեցող տեխնիկական բազայի և տվյալների կառավարման ընթացակարգերի գնահատում:<br><br>Տեսչական գործընթացների թվայնացման ճանապարհային քարտեզի մշակում:<br><br>Տվյալների կառավարման էլեկտրոնային գործիքների մշակում կամ կիրառվող համակարգերի արդիականացում:<br><br>Համակարգիչների, պլանշետների, շարժական ինտերնետ սարքավորումների և այլ | 2025 թվականի դեկտեմբեր | ԱԱՏՄ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՏՏ ընկերություններ | Արտադրված կամ արդիականացված առնվազն 1 էլեկտրոնային գործիք/հարթակ:<br><br>Թվայնացված գործընթացների թիվ՝ նվազագույնը 3 (օրինակ՝ տեսչական զեկույցների կազմում, վիճակագրության վարում, բողոքների արձագանքման համար):<br><br>Ձեռք բերված առնվազն 50 միավոր տեխնիկական սարքավորում:<br><br>Վերապատրաստված առնվազն 30 աշխատակից՝ թվային գործիքների օգտագործման հարցում: | ԱԱՏՄ կարողությունների տեխնիկական ամրապնդում, տեսչական աշխատանքների արագացում և տվյալների հիման վրա որոշումների կայացման արդյունավետություն, թափանցիկության բարձրացում: | Ֆինանսական աջակցություն՝ սարքավորումների ձեռքբերման, ծրագրային ապահովման ներդրման և վերապատրաստման համար:<br><br>Տեխնիկական խորհրդատվություն՝ թվայնացման ռազմավարության մշակման նպատակով: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկայի ձեռքբերում և տրամադրում:<br><br>Անձնակազմի կարողությունների զարգացում՝ թվային հմտությունների և նոր գործիքների կիրառման ուղղությամբ: | | | | | Միջազգային փորձի փոխանակում՝ առաջատար թվային վերահսկողության համակարգերի գործարկման ուղղությամբ:<br><br>Աջակցություն՝ ծրագրային ինտեգրացիայի և տվյալների պաշտպանության ապահովման շրջանակում: |
| 5 | Աշխատանքային վեճերի արդյունավետ կարգավորման նպատակով դիտարկել արտադատական մեխանիզմի ներդրման հնարավորությունը՝ անկախ կամ տեսչական մարմնի կազմում, միաժամանակ օրենսդրությամբ հստակեցնելով ԱԱՏՄ վերահսկողական լիազորությունների շրջանակը՝ բա- | Գործող իրավակարգավորման և միջազգային փորձի վերլուծություն՝ արտադատական վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ:<br><br>Հետազոտություն՝ վեճերի լուծման արդյունավետության, ընթացակարգերի արագության և հասանելիության վերաբերյալ:<br><br>Իրավական առաջարկությունների մշակումը՝ ԱԱՏՄ լիազորությունների հստակեցման և անհրաժեշտության դեպքում՝ անկախ արտադատական մեխանիզմի | 2026 թվականի մարտ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱԱՏՄ, արդարադատության նախարարություն, մասնագիտական իրավաբանական կազմակերպություններ, անկախ փորձագետներ | Կատարված միջազգային և ազգային փորձի ուսումնասիրություն:<br><br>Մշակված օրենսդրական առաջարկությունների փաթեթ՝ լիազորությունների տարանջատման վերաբերյալ:<br><br>Առնվազն 1 արտադատական մեխանիզմի ձևավորման մոդելի առաջարկ:<br><br>Նոր կամ փոփոխված օրենսդրական ակտի նախագիծ՝ ներկայացված քննարկման: | Աշխատանքային վեճերի արագ և մատչելի լուծման հնարավորությունների ընդլայնում՝ դատարանների բեռնաթափման և աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպաստմամբ: ԱԱՏՄ վերահսկողական և այլ գործառույթների իրավական սահմանների հստակեցում: | Տեխնիկական աջակցություն՝ միջազգային լավագույն փորձի համադրության, իրավական վերլուծությունների և առաջարկությունների մշակման համար:<br><br>Ֆինանսական աջակցություն՝ հետազոտությունների իրականացման և |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ցառելու լիազորությունների անցումը վեճեր լուծելու դաշտ: | ձևավորման վերաբերյալ:<br><br>Իրավական ակտերի նախագծերի մշակում՝ ԱԱՏՄ վերահսկողական և վեճ լուծող լիազորությունների հստակ տարանջատման ուղղությամբ: | | | | | մասնագիտական քննարկումների կազմակերպման համար:<br><br>Իրավական փորձաքննության տրամադրում՝ նոր մեխանիզմների իրավաչափության և կայունության գնահատման նպատակով:<br><br>Կապ միջազգային գործընկերների հետ՝ վեճերի արտադատական կարգավորման մոդելներ փոխանցելու համար: |
| 6 | Տեսչական մարմնի և դրա գործառույթների վերաբերյալ լայնածավալ իրազեկման արշավների իրականացում՝ տեսչական վերահսկողության նշանակության, իրավունքների | Իրազեկման ռազմավարության և հաղորդակցության պլանի մշակում:<br><br>Իրազեկող հոլովակների արտադրություն և տարածում (հեռուստատեսություն, սոցիալական մեդիա, պաշտոնական կայքեր): | Շարունակական գործողություն | ԱԱՏՄ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հաղորդակցության մասնագետներ, ՔՀԿ-ներ, մեդիա գործընկերներ | Առնվազն 5 տեսահոլովակ՝ հեռարձակված հեռուստատեսությամբ կամ սոցիալական մեդիայում:<br><br>Առնվազն 100 տեղեկատվական թերթիկ՝ տարածված հանրային վայրերում: | Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում, վստահության ամրապնդում, աշխատողների և գործատուների իրավագիտակցության | Ֆինանսական աջակցություն՝ տեսանյութերի և տպագիր նյութերի մշակման և տարածման համար:<br><br>Տեխնիկական |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | պաշտպանության գործառույթի և հաջողված դեպքերի հանրայնացման միջոցով՝ հանրային վստահության բարձրացման նպատակով: | Տպագիր տեղեկատվական նյութերի (թերթիկներ, պաստառներ) մշակման և տարածման կազմակերպում տարբեր հանրային վայրերում:<br><br>Տեսչական մարմնի հաջողված դեպքերի ընտրություն և հանրայնացում (պատմություններ, տվյալներ, գրաֆիկներ):<br><br>Թիրախային լսարանների հետ հանդիպումների, քննարկումների և մասնագիտական սեմինարների իրականացում: | | | Տեսչական մարմնի գործունեության մասին առնվազն 3 դրական դեպքի հանրայնացում:<br><br>Թիրախային լսարանների հետ առնվազն 3 հանդիպում (միավորումներ, ուսումնական հաստատություններ, ՏԻՄ-եր): | զարգացում, դիմելիության մակարդակի բարձրացում: | խորհրդատվություն՝ հաղորդակցության ռազմավարության մշակման ընթացքում:<br><br>Միջազգային լավագույն փորձի ներկայացում՝ արդյունավետ իրազեկման մեխանիզմների վերաբերյալ:<br><br>Աջակցություն հանրային միջոցառումների կազմակերպման, մեդիա կապերի ամրապնդման և ազդեցության գնահատման համար: |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ 91, 92 – ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

| Գործողության նկարագրությունը | Գործողություն/ներ | Վերջնաժամկետ | Կատարող/ներ | Հիմնական կատարողականի ցուցանիշ (KPI) | Ակնկալվող արդյունք | ԵՄ-ի աջակցության կարիքն ու ձևաչափը |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղցկեղի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացում | Բարելավել վաղ հայտնաբերումն ու բուժումը՝ արդյունավետ սքրինինգների, ազգային ռեգիստրի և պետության կողմից կառավարվող քաղցկեղով հիվանդներին աջակցելու նպատակով փոխաջակցման հարթակի ներդրմամբ: | 2025-2027 | ՀՀ ԱՆ | - Տարեկան սքրինինգի ծրագրով ընդգրկված բնակչության տոկոսը՝ ըստ տարիքային և ռիսկային խմբերի:<br>- Վաղ փուլում հայտնաբերված քաղցկեղի դեպքերի հարաբերակցությունն ընդհանուր դեպքերին:<br>- Քաղցկեղի ազգային ռեգիստրում գրանցված դեպքերի ամբողջականության և թարմացման հաճախականության ցուցանիշներ:<br>- Աջակցության առցանց հարթակի գործարկման փաստը և օգտատերերի քանակը (քաղցկեղով հիվանդներ և նրանց ընտանիքի անդամներ):<br>- Հարթակի միջոցով տրամադրված հոգեբանական աջակցության և խորհրդատվությունների քանակը տարեկան:<br>- Պացիենտների բավարարվածության մակարդակն աջակցության համակարգից (հարցման միջոցով):<br>- Տարեկան կազմակերպված իրազեկման արշավների քանակը քաղցկեղի կանխարգելման վերաբերյալ: | - Վաղ փուլում հայտնաբերված քաղցկեղի դեպքերի մասնաբաժնի աճ՝ նպատակային սքրինինգի ընդգրկվածության բարձրացման արդյունքում:<br>- Քաղցկեղի ազգային ռեգիստրի լիարժեք գործարկում՝ կանոնավոր թարմացվող տվյալներով, որոնք կօգտագործվեն ռազմավարական որոշումների ընդունման համար:<br>- Օգտագործման համար հասանելի փոխաջակցման առցանց հարթակ՝ հիվանդների և ընտանիքների համար՝ ներառյալ հոգեբանական աջակցություն, սոցիալական աջակցման ուղղորդում, տեղեկատվական նյութեր և ուղեցույցներ:<br>- Բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում և կանխարգելիչ վարքագծի խթանում՝ պարբերաբար իրականացվող տեղեկատվական արշավների միջոցով: | Տեխնիկական աջակցություն քաղցկեղի սքրինինգի ուղեցույցների մշակման, ազգային ռեգիստրի ավտոմատացման և հոգեբանական աջակցության պլատֆորմի ներդրման ուղղությամբ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | - Պացիենտների և խնամակալների շրջանում աջակցության համակարգի նկատմամբ վստահության աճ՝ ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման հիման վրա: | |
